

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 21-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅՈՒՆ ՆԻՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 21-ին Երևանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու նպատակով հողափոխադրության նվիրատվության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանում 16.11.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նամաձայնագիրն ստորագրվել է 2009թ. հունիսի 21-ին Երեւանում՝ Նայասրանի Նանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեւ հարաբերությունների հետագա զարգացման եւ ամրապնդման նպատակով:

2. Նամաձայնագրով սահմանված է, որ կողմերը պարտավորվում են դեսպանության շենքի կառուցման համար միմյանց փրամադրել 0,7 հա հողափարածք Երեւանում եւ Աբու-Դաբիում:

3. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) կատարել անհրաժեշտ բոլոր ծախսերն իր դեսպանության շենքի կառուցման համար փրամադրված հողափարածքի վրա,

բ) հողափարածքի վրա շինությունների կառուցման, ընդարձակման եւ վերակառուցման աշխատանքներն իրականացնել ԱՄԷ օրենսդրության համաձայն եւ իրավասու մարմնի թույլտվությամբ,

գ) աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի եւ սարքավորումների ներմուծման ժամանակ չգանձել մաքսային փոյրքեր եւ որպես ընդունող երկիր կարգավորել այդ աշխատանքներին մասնակցող անձնակազմին արտոնագիր փրամադրելու հետ կապված հարցերը,

դ) կառուցման աշխատանքների ավարտից հետո աջակցել մյուս կողմին կառուցված շինությունների սեփականության իրավունքի պետական գրանցման հարցում,

ե) համաձայնագրում նշված հողափարածքը եւ կառուցման ենթակա շինությունները չվաճառել, վարձակալությամբ չփոխել կամ չփոխանցել՝ առանց մյուս կողմի թույլտվության, եւ դրանք օգտագործել բացառապես դիվանագիտական եւ հյուպատոսական ծառայությունների համար, ինչպես նաեւ դիվանագիտական անձնակազմի կեցության համար:

4. Համաձայնագրում ամրագրված է նաև համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման ընթացքում ծագող վեճերի լուծման, ինչպես նաև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարելու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 21-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արարական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու նպատակով հողատարածքի նվիրատվության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ- 842